ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/237

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26/26-1/13349-2021 գրությամբ Ա/Ձ Դավիթ Բահարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 16.08.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/4235-2021 գրության հիման վրա, 23.08.2021թ. թիվ 26/26-1/13349-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Դավիթ Բահարյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Դավիթ Բահարյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Դավիթ Բահարյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Դավիթ Բահարյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/237 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.08.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/4235-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Դավիթ Բահարյան» ԱՁ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Դավիթ Բահարյան» ԱՁ-ի հայտով ներկայացված հավելված 1.1-ում՝ բոլոր չափաբաժինների մասով, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական ցուցանիշներն ամբողջությամբ չեն ներկայացված:

Ինչպես նաև «Դավիթ Բահարյան» ԱՁ-ն բոլոր չափաբաժինների մասով տեխնիկական ցուցանիշների մի մասը ներկայացրել է հայերեն, իսկ մյուս մասը՝ ռուսերեն լեզվով, քանի որ պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, ապա բոլոր տեխնիկական ցուցանիշները անհրաժեշտ է ներկայացնել պարտադիր նաև հայերեն լեզվով:

Քանի որ առարկայի բնութագիրը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել) պահանջվող շտկումները: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «Դավիթ Բահարյան» ԱՁ-ի ներկայացրած հայտը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/237 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/237 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/237 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Դավիթ Բահարյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 09.08.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանի կողմից ներկայացված հավելված 1.1-ով՝ բոլոր չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական ցուցանիշներից բացակայում են ստորև ներկայացվածները՝ 1-ին չափաբաժնով Պահանջվել է - 3205-3407010,ՊԱՋ մակնիշի մեքենաների համար: Հավաքական, հեղուկի տարայով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Ներկայացվել է - 3205-3407010 Հավաքական, հեղուկի տարայով, ԵԱԳՄ. Բացակայում է - ՊԱՋ մակնիշի մեքենաների համար, Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 3-րդ չափաբաժնով Պահանջվել է - 5511-3501070, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային Ներկայացվել է - 5511-3501070,

Բացակայում է -ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 4-րդ չափաբաժնով Պահանջվել է - 14.1601090-10, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար,Երկու սկավառակով կցորդման համար:հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Ներկայացվել է - 14.1601090-10, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, Բացակայում է - Երկու սկավառակով կցորդման համար:հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 5-րդ չափաբաժնով Պահանջվել է - 4310-3407200-02, ԿամԱԶ մակնիշի մեքենաների համար: Հավաքական, հեղուկի տարայով:Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Ներկայացվել է - 4310-3407200-02, Բացակայում է - ԿամԱԶ մակնիշի մեքենաների համար: Հավաքական, հեղուկի տարայով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 6-րդ չափաբաժնով Պահանջվել է - 21-405, ԿամԱԶ-65115, 6540 մակնիշի, 740.62-280 մոդելի շարժիչով մեքենաների համար, Եվրո շարժիչի, հավաքական թեվիկներով և հիդրոկցորդիչով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - հավաքական թևիկներով և հիդրոկցորդիչով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 7-րդ չափաբաժնով Պահանջվել է - 7406.1118012, 7406.1118013,ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, աջ և ձախ: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, աջ և ձախ: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 8-րդ չափաբաժնով Պահանջվել է - 5402.3708000-01, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար հավելյալ ռելեյով (ДОП. РЕЛЕ): Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների, Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 14-րդ չափաբաժնով Պահանջվել է - 740.13-1005008-20, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, փաթեթավորումը փայտի, ստվարաթղթե կամ պոլիստիրոլե (Պենոպլաստ) արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Ներկայացվել է - 740.13-1005008-20, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, փաթեթավորումը փայտի, ստվարաթղթե կամ պոլիստիրոլե (Պենոպլաստ) արկղով և

պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 22-րդ չափաբաժնով Պահանջվել է - 33.1112110-12Կ, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 23-րդ չափաբաժնով Պահանջվել է - 33.1111074-01, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 26-րդ չափաբաժնով Պահանջվել է - 53212-3400020, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 41-րդ չափաբաժնով Պահանջվել է - Եվրո 3 շարժիչների համար, Եվրո-3 շարժիչով ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական աչ և ձախ: Գործարանային փաթեթավորմամբ ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 53-րդ չափաբաժնով Պահանջվել է - 375-2303072-Б, ՈՒՐԱԼ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 58-րդ չափաբաժնով Պահանջվել է - 55571-3501105-10, ՈՒՐԱԼ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 59-րդ չափաբաժնով Պահանջվել է - 5557Я2-3405012-10, ՈՒՐԱԼ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 66-րդ չափաբաժնով Պահանջվել է – 43203510010, ՈՒՐԱԼ-մակնիշի մեքենաների, համար, հավաքական հեղուկի տարայով: Գործարանային փաթեթավորմամբ

և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական հեղուկի տարայով, Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: Ինչպես նաև «Դավիթ Բահարյան» ԱՁ-ն բոլոր չափաբաժինների մասով տեխնիկական ցուցանիշների մի մասը ներկայացրել է հայերեն, իսկ մյուս մասը՝ ռուսերեն լեզվով, քանի որ պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, ապա բոլոր տեխնիկական ցուցանիշները անհրաժեշտ է ներկայացնել պարտադիր նաև հայերեն լեզվով: Քանի որ առարկայի բնութագիրը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 09.08.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ 11.08.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել պահանջվող շտկումները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13349-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 16.08.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/4235-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը ***կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ

ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Դավիթ Բահարյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 09.08.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանի կողմից ներկայացված հավելված 1.1-ով՝ բոլոր չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական ցուցանիշներից բացակայում են ստորև ներկայացվածները՝ 1-ին չափաբաժնով Պահանջվել է - 3205-3407010,ՊԱՋ մակնիշի մեքենաների համար: Հավաքական, հեղուկի տարայով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Ներկայացվել է - 3205-3407010 Հավաքական, հեղուկի տարայով, ԵԱԳՄ.Բացակայում է - ՊԱՋ մակնիշի մեքենաների համար, Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 3-րդ չափաբաժնով Պահանջվել է - 5511-3501070, ԿամԱՋ-մակնիշի մեքենաների համար: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային Ներկայացվել է - 5511-3501070, Բացակայում է -ԿամԱՋ-մակնիշի մեքենաների համար: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 4-րդ չափաբաժնով Պահանջվել է - 14.1601090-10, ԿամԱՋ-մակնիշի մեքենաների համար,Երկու սկավառակով կցորդման համար:հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Ներկայացվել է - 14.1601090-10, ԿամԱՋ-մակնիշի մեքենաների համար, Բացակայում է - Երկու սկավառակով կցորդման համար:հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 5-րդ չափաբաժնով Պահանջվել է - 4310-3407200-02, ԿամԱՋ մակնիշի մեքենաների համար: Հավաքական, հեղուկի տարայով:Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Ներկայացվել է - 4310-3407200-02, Բացակայում է - ԿամԱՋ մակնիշի մեքենաների համար: Հավաքական, հեղուկի տարայով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված,

մակնիշավորումը գործարանային: 6-րդ չափաբաժնով Պահանջվել է - 21-405, ԿամԱԶ-65115, 6540 մակնիշի, 740.62-280 մոդելի շարժիչով մեքենաների համար, Եվրո շարժիչի, հավաքական թեվիկներով և հիդրոկցորդիչով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - հավաքական թևիկներով և հիդրոկցորդիչով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 7-րդ չափաբաժնով Պահանջվել է - 7406.1118012, 7406.1118013,ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, աջ և ձախ: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, աջ և ձախ: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 8-րդ չափաբաժնով Պահանջվել է - 5402.3708000-01, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար հավելյալ ռելեյով (ДОП. РЕЛЕ): Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների , Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 14-րդ չափաբաժնով Պահանջվել է - 740.13-1005008-20, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, փաթեթավորումը փայտի, ստվարաթղթե կամ պոլիստիրոլե (Պենոպլաստ) արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Ներկայացվել է - 740.13-1005008-20, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, փաթեթավորումը փայտի, ստվարաթղթե կամ պոլիստիրոլե (Պենոպլաստ) արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 22-րդ չափաբաժնով Պահանջվել է - 33.1112110-12ک, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 23-րդ չափաբաժնով Պահանջվել է - 33.1111074-01, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է - ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 26-րդ չափաբաժնով Պահանջվել է - 53212-3400020, ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը

գործարանային: 41-րդ չափաբաժնով Պահանջվել է - Եվրո 3 շարժիչների համար, Եվրո-3 շարժիչով ԿամԱԶ-մակնիշի մեքենաների համար, հավաքական աչ և ձախ: Գործարանային փաթեթավորմամբ ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 53-րդ չափաբաժնով Պահանջվել է - 375-2303072-Б, ՈՒՐԱԼ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 58-րդ չափաբաժնով Պահանջվել է - 55571-3501105-10, ՈՒՐԱԼ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 59-րդ չափաբաժնով Պահանջվել է - 5557Я2-3405012-10, ՈՒՐԱԼ-մակնիշի մեքենաների համար, հավաքական: Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական, Գործարանային փաթեթավորմամբ, ստվարաթղթե արկղով և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: 66-րդ չափաբաժնով Պահանջվել է – 43203510010, ՈՒՐԱԼ-մակնիշի մեքենաների, համար, հավաքական հեղուկի տարայով: Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային, Բացակայում է – հավաքական հեղուկի տարայով, Գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորված, մակնիշավորումը գործարանային: Ինչպես նաև «Դավիթ Բահարյան» ԱՁ-ն բոլոր չափաբաժինների մասով տեխնիկական ցուցանիշների մի մասը ներկայացրել է հայերեն, իսկ մյուս մասը՝ ռուսերեն լեզվով, քանի որ պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, ապա բոլոր տեխնիկական ցուցանիշները անհրաժեշտ է ներկայացնել պարտադիր նաև հայերեն լեզվով: Քանի որ առարկայի բնութագիրը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական

բնութագրի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 09.08.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ 11.08.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել պահանջվող շտկումները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Մասնակիցը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել, հետևաբար գտնում եմ, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13349-2021 գրությամբ Ա/Ձ Դավիթ Բահարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Դավիթ Բահարյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**